**Տեղեկատվական սեմինար**

**Սևանի հիմնախնդիրները**

**«Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված համատեղ ջանքեր (BeECO)» ծրագրի շրջանակներում**

«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը ԵՀԳ Սևծովյան ավազանի երկրների անդրսահմանային համագործակցություն ծրագրի ֆինանսավորմամբ իրականացվող «Սևծովյան ավազանում շրջակա միջավայրի պաշտպանությանն ուղղված համատեղ ջանքեր (BeECO)» ծրագրի շրջանակներում հրավիրում է հետաքրքրված ուսանողներինմասնակցել տեղեկատվական սեմինարի, որը տեղի է ունենալու Երևանի պետական համալսարանի Պալյանների դահլիճում, **դեկտեմբերի 18ին, ժամը 16:30ին:**

BeECO ծրագիրը նախատեսում է բարձրացնել հասարակության բնապահպանական կրթության և իրազեկվածության մակարդակը, համատեղ ջանքերով մշակել շրջակա միջավայրի բարելավմանն ուղղված նորարարական մոտեցումներ՝ նպաստելու գետերի և Սևծովյան ավազանի աղտոտման կրճատմանը:

Սեմինարը նախատեսում է ծրագրի ներկայացում ծրագրի ղեկավարի կողմից, ինչպես նաև ԵՊՀ դասախոս տիկին Լուսինե Համբարյանի պրեզենտացիա Սևանի խնդիրների թեմայով: Կցուցադրվի Սևանա լճի հիմնախնդիրների մասին «Սևան. էկովեթինգ» ֆիլմը:

Սիրով սպասում ենք:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք դիմել ծրագրի ղեկավար Գայանե Սարգսյանին 093650474 հեռախոսահամարով կամ info@urbanfoundation.am հասցեով: